ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՐԱՏԱՅ.

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ Ուսուցչուհի Օր. Ե. Ռրա՝ Լանցը մեզ գրում է, «Մարտի 3) ին թեմական վերատեսուչ Արժանապատիւ Խորէն Ծայրագոյն վարդապետ Ստեփանէն թողեց Աստրախանն ու հեռացաւ շրջագայելու իւր վիճակում։ Թէ որքան օգուտ բերեց հայր Խորէնի Աստրախան գալը, ես չեմ կարող յիշել միառմի տեղի սղութեան պատճառով. միայն այս չափը կասեմ, որ մեր քայքայուած և յստուկ կանոններից զուրկ դպրոցները սկսեցին կեանք և հոգի առնել սորա օրով։ Շատ մեծ հարուած կլինի մեր դպրոցների համար, եթէ այլ ևս չվերադառնայ հայր վերատեսուչը Աստրախան. որովհետև տեղիս օգը. ինչպէս և ինքը ասում է, սաստիկ վատ ազդեցութիւն ունեցաւ նորա առողջութեան վերայ։ Ամբողջ վերջին երեք ամիսը ծանր հիւանդութիւն քաշեց և երբէք չդադարեց աշխատելուց և գործելուց։

Աստրախանցւոց սրտի բաղձանքը կատարուած կլինի և մեր դպրոցները բոլորովին ապահովուած կհամարվին բարոյապէս ու մտաւորապէս, եթէ Գեր. Հայր Վերատեսուչը կը վերադառնայ Աստրախան և չի հաստատել իւր բնակութիւնը մի այլ տեղ։

Խորը զգածուած լինելով ջերմաջերմ երախտապարտութեամբ առ Գեր. Հ. Վերատեսուչը, նոյն իսկ նորա հեռանալու օրը, երբ եկել էր Օր. դպրոց բարեաւ մնաս ասելու աշակերտուհիներուն, ես իմ կողմից մատուցի այս յետագայ ուղերձը, որուն խոնարհաբար խնդրում եմ, որ բարեհաճէք տեղ շնորհելու «Արարատ» պատուական ամսագրում *)։

ԾԽԱԿԱՆ ՀՈԴԵՒՈՐ ԴՊՐՈՑ ՁԻԹԻՀԱՆԷՎԱ ԳԻՒՂԻՒՄ.

Սոյն դպրոցի գոյութեան մասին իմ ժողոված համառօտ տեղեկութիւնը իւր համառօտ հաշուեցուցակով, որ արտագրել եմ ելևմտից տումարից, ուղարկելով Խմբագրութեանդ՝ խնդրեմ հրատարակել ի գիտութիւն մերազնէից. բայց նախ քան այս աւելորդ չեմ համարում երկու խօսք նուիրել մեր գիւղական ուսուցիչներին։

Ընթերցող հասարակութեան միշտ փափագելի է իմանալ թէ արդեօք կրթական գործը ի՞նչպէս է ընթանում դանազան գաւառների հեռաւոր անկիւններում և թէ ի՞նչ վիճակի մէջ են գտանվում գիւղական դպրոցները, բայց չունինք այսպիսի մի վիճակագրական հրատարակութիւն՝ որ յագեցնէր հասարակութեան սոյն հետաքրքրութիւնը, թե-

---

(*) Յարգելի օրիորդը թող ներէ, որ չկարողացանք տպագրել իւր ուղերձը տեղի սղութեան եւ նրանից առաջացած պատճառաւ։ Ս. Խ.